ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի
ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 17:00 քաղաք Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի արտահերթ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 15 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Երվանդ Խաչատրյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 15 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 127-Լ որոշումը:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 06-ի ութերորդ նստաշրջանի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով դրամական միջոցները որպես նվիրատվություն ընդունելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չգրանցվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 15 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 15
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 128-Ա որոշումը:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 17:11-ին:
Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Էդվարդ Ափոյան				9. Վահան Հախվերդյան			
2. Նաիրա Բասենցյան				10. Հրաչյա Ավետիսյան			
3. Գևորգ Ղազարյան				11. Աննա Կիրակոսյան			
4. Լիլիթ Միրզախանյան				12. Աղասի Բաղդասարյան			
5. Ներսես Մելիքյան				13. Խաչատրյան Լևոն			
6. Վարդան Գրիգորյան				14. Ավագյան Ռաֆիկ			
7. Կարեն Մովսիսյան				15. Նաիրա Գրիգորյան			
8. Գոհար Նիկողոսյան							

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ **Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ**